ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 01 >> 09 2016թ. Ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ՝

ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի՛ ուսուցիչներ, սիրելի՛ դպրոցականներ, ուսանողնե՛ր. ի սրտե շնորհավորում եմ ձեզ սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվա և նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

Կրթության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության հիմքում դրված է մրցունակ դպրոց կերտելու հրամայականը, ինչից էլ մեծապես կախված է մեր պետության վաղվա հզորությունն ու բարեկեցությունը: Դուք այն սերունդն եք, որ իրագործելու եք ավագների նվիրական իղձերը:

Դպրոցն ընտանիքի շարունակությունն է, որտեղ երեխաները հասունանում են որպես հասարակության լիարժեք անդամներ: Պիտի գիտակցենք, որ դպրոցների և ուսուցիչների խնդիրները յուրաքանչյուրիս ընտանիքի և մեր ընդհանուր ապագայի խնդիրն է, որի լուծումը մենք տալիս ենք և տալու ենք բոլորիս միասնական ու հետևողական աշխատանքով:

Այս նշանակալի տոնի առիթով ցանկանում եմ առանձնահատուկ շնորհավորանքներ հղել մարզի և Գյումրու հազարավոր առաջին դասարանցիներին, առաջին կուրսեցիներին, ովքեր ոտք են դնում նոր կյանք, ուր իրենց գերելու են նորն ու գեղեցիկը, հետաքրքիրն ու լուսավորը: Նոր ուսումնական տարում մաղթում եմ քաջառողջություն և հաջողություններ ուսման մեջ:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ